

Դ. ՄԱՍԻՆ ՍԻԲԻՐԵԱԿ

# Ո Ր Դ Ե Գ Ի Ր Ը

Որսորդի պատմութիւնները

Ռուսերէնից թարգմ. Ս. ՍՈՏՆԻԿԵԱՆ

Յանդրած «ՀՅՍԿԵՐ» ամսագրի

891.71

Մ-22

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Ն. Աղանեանի, Պոլից. 7

1915

Հրատարակութիւն «ՆԻԻՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ» քաղ. № 26 30 SEP 2006

891.71  
Մ - 22  
էջ.

Դ. ՄԱՍԻՆ ՍԻԻՐԵԱԿ

24<sub>3</sub>



# Ո Ր Դ Ե Գ Ի Ր Ը

Որսորդի պատմութիւններից

Ռուսերէնից թարգմ. Ս. ՍՈՏՆԻԿԵԱՆ

Յաւելած «ՀԱՍԿԵՐ» ամսագրի

Թ Ի Ֆ Լ Ի Ս  
Տպարան Ն. Աղանեան, Պոլից. 7  
1915

Տոկոս

~~1008~~

1008  
35280

Ս  
ՅԻՐ

24 JUN 2013

11990

23 MAY 2013

Handwritten numbers and symbols, possibly '7' and '49'.

Handwritten text, possibly a title or header, partially obscured by a stamp.

Handwritten text, possibly a date or reference number.

Handwritten text, possibly a name or location.

Handwritten text, possibly a date or reference number.

Handwritten numbers, possibly '041844'.

Handwritten text, possibly a name or location.

Handwritten number, possibly '101'.



# Ո Ր Դ Ե Գ Ի Ր Ը

## ՈՐՍՈՐԴԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

I.

Ամառայ անձրեային մի օր էր: Սիրում եմ այդպիսի եղանակին թափառել անտառում, մանաւանդ երբ մօտերքում կայ մի անկիւն, որտեղ կարելի է տաքանալ և շորերը չորացնել: Ամառայ անձրեայ էլ տաք է լինում: Այսպիսի եղանակին քաղաքում ցեխ է լինում, իսկ անտառներում գետինը ազահօրէն ծծում է խոնաւութիւնը, և քայլում ես անցեալ տարւայ փուլած տերեւների, չամի և եղևնի թափթըփուած փշերի կիսախոնաւ գորգի վրայով: Ծառերը ծածկւած են լինում անձրևի կաթիլներով, որոնք երբեմն շարժումից ցած են թափւում: Իսկ երբ այդպիսի անձրևից յետոյ ամպերի տակից դուրս է նայում արևը, անտառը ամբողջովին պայծառ կանաչ է կտրում և պըսպղում է հազար ու մի աղամանգներով: Ինչ որ հանդիսաւոր ուրախութիւն է տիրում շուրջը, և քեզ էլ ցանկալի, թանկագին հիւր ես զգում այդ հանդէսին:

Ահա այդպիսի անձրեային մի օր ես մօ-

տենում էի Պարզ լճին, ծանօթ պահապան Թորոսի խրճիթին, որ գտնւում էր ձկնորսների ապաստարանում:

Անձրևն արդէն նօսրացել էր: Երկնքի մի կողմը կապոյտ ձեղք էր բացել. ուր որ է ամառայ տաք արևը պիտի երևար: Անտառի շաւիղը յանկարծ ոլորւեց, և ես դուրս եկայ մի թեք հրևանդան, որը լայն լեզւի պէս ձգւում էր լճի մէջ: Իսկապէս այս տեղ ոչ թէ լիճն էր, այլ երկու լճերը միացնող լայն նեղուց, որի ցածր ափի մօտ, մի փոքրիկ ծոցի մէջ պատուարւում են ձկնորսների նաւակները: Այդ նեղուցը գոյացել էր շնորհիւ այն անտառապատ կղզու, որը կանաչ գլխարկի պէս բազմել էր ապաստարանի դիմացը:

Իմ երևալուն պէս՝ Թորոսի շունը հաչեց: Անծանօթ մարդկանց վրա նա միշտ ուրիշ տեսակ էր հաչում, ընդհատ-ընդհատ և բարձրաձայն, կարծես բարկացած հարցնելիս լինէր, թէ՛ «Ով է գալիս»: Սիրում եմ այդպիսի խելօք և հաւատարիմ շներին:

Ձկնորսի խրճիթը հեռւից յատակը վեր շրջւած մեծ նաւակ էր յիշեցնում իր կորացած փայտէ կտուրով, որ ժպտուն, կանաչ խոտով էր ծածկւած: Խրճիթի շուրջը այնպիսի խիտ ու բարձր խոտ էր բուսել, որ մօտեցողի միայն գլուխն էր երևում: Այսպիսի խիտ բուսականութիւն միայն լճի ափերին է լինում, որովհետև այնտեղ հողը բաւականին խոնաւ է լինում

և պարարտ:

Երբ արդէն բոլորովին մօտեցել էի խրճիթին, խոտերի միջից դուրս թռաւ մի փոքրիկ շուն և սկսեց սաստիկ հաչել:

— Լռիր, Սամուրիկ... չը ձանաչեցիր:

Սամուրիկը դադարեց հաչելուց և մտածկոտ կանգ առաւ, կարծես չէր հաւատում թէ հին ծանօթներ ենք: Նա զգուշութեամբ մօտեցաւ ինձ, հոտոտեց որսորդական կօշիկներս և միայն այս ձևականութիւնից յետոյ յանցաւորի պէս պոչը խաղացրեց:

Այսինքն թէ՛ մեղաւոր եմ, սխալւեցի, բայց չէ՞ որ ես պիտի խրճիթը պահեմ:

Խրճիթը դատարկ էր: Տանտէրը այնտեղ չէր: Երևի գնացել էր ձկնորսական թոռերին նայելու: Խրճիթի շուրջը ամեն ինչ կենդանի մարդու ներկայութիւն էին ցոյց տալիս. անա մեղմ վառուղ կրակը, մի խտիտ նոր կօտրած փայտ, բրերի վրայ չորացող թոռը և փայտակոճղի մէջ ցցւած կացինը: Կիսաբաց դռնից Թորոսի ամբողջ անտեսութիւնն էր երևում. պատից կախած հրացանը, մի քանի ամանեղէն վառարանի առջևի մասում, սնդուկը նստարանի տակ և կախոտած ցանցեր: Խրճիթը բաւականին արձակ էր, որովհետև ձմեռը, ձուկ բռնելու ամենալաւ ժամանակը, այնտեղ ձկնորսների մի ամբողջ խումբ է տեղաւորւում:

Ամառը ծերուկը մենակ էր ապրում: Ինչ

եղանակ էլ որ լինէր, նա ամեն օր վառում էր իր ուսական վառարանը և վրան քնում: Տաքութիւն սիրելը Թորոսի պատկառելի տարիքովն էր բացատրուում: Նա մօտ իննսուն տարեկան կը լինէր. մօտաւորապէս եմ ասում, որովհետեւ ինքը, Թորոսը մոռացել էր թէ երբ էր ծնւել. «Դեռ ֆրանսիացոց գալուց առաջ էր», բացատրում էր նա, այսինքն մինչև 1812 թւին ֆրանսիացոց Ռուսաստան արշաւելը:

Հագիս թաց բաճկոնը հանեցի, գէնքերս պատից կախեցի և սկսեցի կրակ վառել:

Սամուրիկը վաստակի յոյսով՝ շարունակ շուրջս էր պտըտում:

Կրակն ուրախ բորբոքւեց, կապոյտ ծուխ արձակելով դէպի վեր...

Անձրևը գազարեց: Երկնքում կտոր-կտոր ամպեր էին վազում և անձրևի մանր կաթիլներ թափում: Տեղ տեղ կապոյտ երկինքն էր երեւում:

Մի փոքր յետոյ արևն էլ երևաց յուլիսւայ տաք արևը, որի ճառագայթներից կարծես ծխել սկսեց թաց խոտը: Լճի շուրը հանգիստ էր: Շուրջս թարմ խոտի եղիսպակի և ոչ հեռու գտնւող համր անտառի խէփի բոյրն էր տարածւում: Լաւ էր: Այսպէս լաւ միայն անտառի խուլ անկիւնում կարող է լինել:

Այլ կողմը, որտեղ նեղուցն էր վերջանում, Պարզ լճի կապոյտ մակերևոյթն էր երևում, իսկ ծառերի ատամնաձև գազաթների ետևից սարերն

էին բարձրանում: Ինչ հրաշալի անկիւն է: Ձուր չէր ծեր Թորոսն այստեղ քառասուն տարի ապրել: Քաղաքում նա դրա կիսի չափ էլ չէր ապրի, այդպիսի մաքուր օդ այնտեղ չես գտնի, մանաւանդ այդպիսի հանգստութիւն: Լաւ էր ձկնորսների այս ապաստարանում: Կրակն ուրախ վառւում է, տաք արևն սկսում է այրել. լճի փայլուն հեռաւորութեանը նայելիս, աչքերդ ցաւում են: Կր նստէի այստեղ և երբէք չէի բաժանւի անտառի այս հրաշալի անդորութիւնից: Քաղաքը վատ երազի նման կանգնում էր մտքիս առջև...

Պղնձէ թէյամանը շրով լցրի և փայտից կապելով՝ կրակի վրա կախեցի և սպասում էի ծերուկին: Ձուրն ակաճեց եռալ, բայց ծերուկը դեռ չէր երևում:

Ուր կարող էր գնացած լինել, մտածում էի բարձրաձայն: Յանցերն ու թոռերն առաւօտներն են նայում, իսկ այժմ արդէն կէս օր է... Գուցէ գնացել է գաղտնի ձուկ որսողներին բռնելու... Սամուրիկ, ուր է քո տէրը:

Խելօք շունը հաստ պոչն էր միայն շարժում, դունչուպուռնաբլ լիզում և անհամբեր կլանչում: Սամուրիկը «փէշակաւոր» շների տեսակին էր պատկանում: Ինքը փոքրիկ, քիթը սուր, ականջները ցից, պոչը դէպի վեր ուրուած, նա գուցէ սովորական տնպահ շանը նման էր, եթէ կարողանալիս չը լինէր անտառում սկիւռի կամ եղջերուի հետքը գտնել, կամ

փայտփորիկի վրա հաչել: Մի խելօք ու վարժ շուն էր ծերուկի հաւատարիմ ընկերը: Այդպիսի շանը պէտք է անտառում տեսնել, որ կարելի լինի ինչպէս հարկն է գնահատել նրա բոլոր բարեմասնութիւնները:

Երբ շունն ուրախ հաչեց, ես հասկացայ որ տիրոջն է նկատել: Եւ իրաւ, նեղուցի վրա հեռուում սկին էր տալիս ձկնորսի նաւակը, որը կղզու ափի ետեւից առաջ էր շարժուում: Թորոսն էր: Նաւի մէջ կանգնած նա ճարպկօրէն գործում էր միայն մի թիակով: Այդպէս են թիավարում իսկական ձկնորսները: Երբ նաւակը մօտեցաւ, ես նկատեցի, որ նաւակի առջևից մի կարապ էր լողում:

— Գնա՛, զբօսասէր, տո՛ւն գնա, — մըրթմըրթում էր ծերուկը սիրուն լողացող թռչունին քշելով: — Գնա՛, գնա՛. ես քեզ ցոյց կը տամ... հեռանալ, այն էլ Աստուած գիտէ թէ ուր... Գնա, զբօսասէր, գնա՛:

Կարապը լողալով մօտեցաւ, դուրս եկաւ ափը և իր սև ոտքերի վրա ծանր շորորալով ուղևորեց զէպի խրճիթը:

## II.

Ծեր Թորոսը բարձրահասակ, սպիտակ ու լայն մօրուքով ծերունի էր, խոշոր, մոխրագոյն ու խիստ աչքերով: Ամբողջ ամառը նա առանց գլխարկի և ոտաբոպիկ էր ման գալիս: Զարմա-

նալին այն էր, որ այդ հասակում նրա բոլոր ատամները դեռ տեղն էին, իսկ գլխի մազերը չէին սպիտակել: Այրւած լայն երեսը խոր կընճիւններով էր ակօսւած: Շոգ ժամանակ նա միայն մի կտաւէ կապոյտ շապիկով էր ման գալիս:

— Բա՛րև, Թորոս.

— Աստծու բարին, պարոն.

— Ո՞րտեղից ես գալիս.

— Որգեգրից, անա այս կարապի ետեւիցն էի գնացել: Շարունակ այստեղ այս նեղուցի մէջն էր լինում, յանկարծ կորաւ: Ես էլ ետեւիցը ընկայ: Գուրս եմ գալիս լիճը, դէս նայում, դէնը, — չը կայ, ծանծաղ գետախորշը մտայ — չը կայ... Տեսնեմ, կղզու ետևն է լող տալիս:

— Ո՞րտեղից ես ճարել այդ կարապը:

— Աստուած է ուղարկել... Այն: Այստեղ որսորդ պարոններ էին եկել, մի որձ և մի էգ կարապ սպանեցին, իսկ սա մենակ մնաց: Եղեգնիների մէջ էր մտել. դեռ փոքր էր, թռչել չէր կարողանում և թաք էր կացել երեխայի նման: Ես ի հարկէ թակարդ դրի այդ եղեգնուտի մօտ և բռնեցի: Իզուր պիտի կորչէր մենակ, բազէնները պիտի ուտէին, դեռ անխելք էր: Որբ էր մնացել, բերի ինձ մօտ և անա պահում եմ: Արդէն ընտելացել է. շուտով մի ամիս կը լինի, ինչ միասին ենք ապրում: Առաւօտ արշալուսին դուրս է գալիս, լող տալիս նեղուցի մէջ և կերակրում, և նորից տուն է դառնում. գիտէ

իմ արթնանալու ժամանակը և սպասում է, որ իրեն կերակրեմ: Մի խօսքով խելօք թռչուն է, և կարգ ու կանոն գիտէ:

Ծերուկը այնպէս սիրով էր խօսում իր Որդեգրի մասին, կարծես մի մօտիկ մարդու մասին խօսելիս լինէր: Կարապը մօտեցաւ խրճիթին և սպասում էր որ բան ստանայ:

— Կրփախշի քեզանից, պապի, — նկատեցի ես:

— Ինչո՞ւ պիտի փախշի. այստեղ էլ լաւ է. միշտ կուշտ է, շուրջը շուր... —

— Իսկ ձմեռը.

— Ինձ հետ խրճիթում կանցկացնի, տեղներս բաւական է ինձ և Սամուրիկի համար էլ, ուրախ կը լինի: Անցեալները մի որսորդ էր եկել, կարապին տեսաւ, և նոյնն էր ասում: «Կը թռչի, ասում էր, եթէ թևերը չը կտրես.»

— Ինչպէս կարելի է խեղանդամ անել Աստրծու արարած թռչունին: Թող ապրի, ինչպէս Աստուածանից կարգադրւած է: Մարդուս կարգադրւած է մի բան. թռչունին՝ մի ուրիշ: Ձեմ հասկանում այդ պարօնները ինչո՞ւ կրակեցին խեղճ կարապներին, չէ՞ որ ուտելու չէին:

Կարապը նայում էր իր խելօք աչքերով, կարծես հասկանալիս լինէր ծերուկի ասածը:

— Իսկ Սամուրիկի հետ ինչպէ՞ս է, — հարցրի ես:

— Սկզբում վախենում էր, յետոյ սովորեց: Այժմ երբեմն նոյն իսկ Սամուրիկի բաժինն է խլում: Շուներ վրան հաշում է, իսկ կարապը

խփում է թևով: Ծիծաղալի է նայել հեռից: Երբեմն էլ միասին զբօսելու են գնում. կարապը ջրի վրա է լողտալիս, իսկ Սամուրիկն ափին վազում:

Փորձեց մի օր շունը լող տալ նրա ետևից, բայց իր արհեստը չէր, քիչ ֆնաց խեղդւի: Իսկ եթէ կարապը լողալով շատ է հեռանում, Սամուրիկն սկսում է որոնել. նստում է ափին և ունում. այս ինքն թէ՛ տխուր եմ առանց քեզ, մտերիմ ընկեր: Ահա այսպէս ենք ապրում երեքով:

Շատ էի սիրում ծերուկին: Շատ բան գիտէր և շատ լաւ էլ պատմում էր: Քանի քանի ամառայ գիշերներ եմ անց կացրել ձըկնորսների այդ ապաստարանում և ամեն անգամ նոր բան եմ իմացել ծերուկից: \*

Թորոսն առաջ որսորդութեամբ էր պարապում: Յիսուն վերստ տարածութեան վրա շրջակայքի բոլոր տեղերը ծանօթ էին նրան, բոլոր թռչունների և գազանների սովորոյթները գիտէր: Այժմ հեռու գնալ չէր կարողանում և միմիայն իր ձկների հետ էր: Նաւակով լողալն աւելի հեշտ է քան հրացանն ուսին անտառէ անտառ թափառելը և մանաւանդ սարեր բարձրանալը: Այժմ հրացանը ֆնացել էր հնուց յիշատակ. ասենք գայլերի դէմ գեռ ևս կարող էր պէտք գալ: Ձմեռը գայլերը երբեմն մօտենում էին ձկնորսների ապաստարանին և վաղուց ատամներ սրում էին Սամուրիկի վրա: Բայց Սա-

մուրիկը խորամանկ էր և նրանց ճանկն ընկնողը չէր:

Ամբողջ օրն այդտեղ մնացի: Երեկոյեան գնացինք ձուկ որսալու, իսկ գիշերը թակարդ դրինք:

Գեղեցիկ է Պարզ լիճը: Եւ գուր չեն նրան այդպէս անւանում: Զուրն այնքան է պարզ, որ նաւակով լողալիս տեսնում ես ամբողջ յատակը մի քանի սաժեն խորութեան վրա, գոյնզգոյն քարեր, գեղեցիկ աւազ, ծովասէզ և խմբով լողացող ձկներ: Այսպիսի լեռնային լճեր հարիւրներով են Ուրալեան լեռներում, և բոլորն էլ անսովոր գեղեցիկութիւն ունին: Բայց Պարզ լիճը նրանով է տարբերւում միւս լճերից, որ նա միայն մի կողմից է կպած սարերին. նրա միւս կողմը Բաշկիրեան տափաստանն է բացւում: Գեղեցիկ անդորր տեղեր շատ կային Պարզ լճի շուրջը: Նրա միջից դուրս է հոսում լեռնային մի խիզախ գետ: Լճի երկարութիւնը քսան վերստի է հասնում, լայնութիւնը՝ մօտ տասը վերստի, իսկ խորութիւնը տեղ տեղ հասնում է տասնըհինգ սաժենի: Այդ լիճն առանձնապէս գեղեցկացնում են մի խումբ անտառապատ կղզիներ, որոնցից մէկը լճի ուղիղ մէջտեղն է գտնւում և կոչւում է «Սովի Կղզի», որովհետեւ եթէ վատ եղանակին ձկնորսներն ընկնում են այդտեղ, պատահում է, որ օրերով սոված են մնում: Թորոսն ապրում էր Պարզ լճի ափին ար-

դէն քառասուն տարի: Մի ժամանակ նա ընտանիք և տուն ունէր, բայց երեխաները մեռան, կիսն էլ մեռաւ, և Թորոսն անտուն անտէր, տարիներ շարունակ ապրում էր Պարզ լճի ափին:

— Չես տխրում, պապի, — հարցրի ես նրան, երբ վերադառնում էինք ձուկ որսալուց. — Դժւար է անտառում մենակ ապրելը:

— Մենակ... դու էլ բան ես ասում, պարոն... Ես այստեղ իշխանի նման եմ ապրում. ամեն ինչ ունեմ... ամեն տեսակ թռչուն, ամեն տեսակ ձուկ և խոտ: Ի հարկէ, նրանք չեն խօսում, բայց ես հասկանում եմ նրանց լեզուն: Սիրտս ուրախանում է Աստու արարածին նայելիս... ամեն մէկն իր սովորութիւնը, իր խելքն ունի: Կարծում ես ձուկը ջրի մէջ գո՛ւր է լողում, կամ թռչունը թռչում անտառում: Ո՛չ, նրանց հոգսը մերից պակաս չէ... Ահա, նայիր տես կարապն սպասում է ինձ և Մամուրիկին:

Ծերուկը շատ գոհ էր իր Որդեգրից և բոլոր խօսակցութիւնների վերջը անպատճառ պիտի յիշէր նրան:

— Հպարտ, իսկական արքայական թռչուն է, բացատրում էր ծերուկը: Մէկ փորձիր կերակուր ցոյց տալ ու կանչել և չը տալ, միւս անգամ էլ մօտ չի գայ: Իր բնաւորութիւնն ունի, ինչ արած, որ թռչուն է... Մամուրիկի հետ էլ իրեն հպարտ է պահում:



հենց որ մի բան է լինում, իսկոյն թևոյն է տալիս կամ կտցահարում: Շունը, պարզ է, երբեմն հանաք անել է ուզում, աշխատում է ատամներով պոչիցը բռնել, կարապն իսկոյն մոռութիւն, թէ՛ «Պոչս քեզ համար խաղալիք չէ»...

Այդ օրը ես գիշերեցի թորոսի մօտ և առաւօտեան պատրաստեցի գնալու:

— Աշնանը եկ,— ասում էր ծերուկը բաժանելիս.— այն ժամանակ ձուկն աւելի լաւ կը որսանք. քաբոններ էլ կը կրակենք, աշնանը նրանք գիրացած են լինում:

— Լաւ, Պապի, կաշխատեմ գալ:

Արդէն հեռանում էի այդտեղից, երբ ծերուկն ինձ ետ կանչեց, ասելով՝

— Մէկ նայիր, պարոն, կարապն ինչպէս խաղում է Սամուրիկի հետ...

Եւ իսկապէս արժէր նայել այդ տեսարանին: Կարապը կանգնած էր թևերը տարածած, իսկ Սամուրիկը կոնձկոնձալով և հաչելով վրա էր ընկնում: Խելօք թռչունը վիզը երկարացրած՝ կռկռում էր շան վրա այնպէս, ինչպէս բազերն են անում: Իսկ ծեր թորոսը երեխայի պէս սրտանց ծիծաղում էր այդ տեսարանի վրա:

### III.

Հետևեալ անգամ այցելեցի Պարզ լիճը աշնան վերջերը երբ առաջին ձիւնն արդէն

եկել էր. աշնանն էլ է գեղեցիկ անտառը: Դեղին տերևները տեղ տեղ դեռ մնում էին ողորենու վրա:

Չամը և եղևնին աւելի կանաչ էին երեւում, քան ամառը: Աշնան չոր խոտը խոզանակի նման դուրս էր ցցւել ձիւնի տակից: Շուրջը կատարեալ լուսթիւն էր ախրում, կարծես ամառուայ եռոդ կեանքից յոգնած՝ բնութիւնը հանգստանալիս լինէր այժմ: Այս անգամ Պարզ լիճն աւելի մեծ էր երևում, որովհետև ափի կանաչն այժմ չը կար: Լճի վճիտ ջուրը պղտորւել էր և աշնան ծանր ալիքն աղմկելով փշրւում էր ափին:

Թորոսի խրճիթը դարձեալ իր հին տեղն էր, բայց այս անգամ նա աւելի բարձր էր երևում, որովհետև շրջապատող բարձր խոտն այլևս չը կար: Սամուրիկը դուրս վազեց: Այժմ նա ինձ ճանաչեց և հեռուից փաղաքշական կերպով պոչը խաղացրեց: Թորոսը տանն էր. նա իր թոռն էր կարկատում ձմեռուայ որսի համար:

— Բ՛արև, ծերուկ.

— Բ՛արև, պարոն.

— Ինչպէ՞ս ես.

— Ոչինչ... միայն աշնան առաջի ձիւնից մի փոքր հիւանդացել էի: Ոտքերս էին ցաւում... Վատ եղանակին միշտ այդպէս է լինում:

Եւ իրաւ, ծերուկի դէմքը յոգնած էր: Այժմ նա աւելի ծերացած և խեղճուկ էր երե-

ւում: Ասենք, այդ ինչպէս յետոյ պարզեց,  
բոլորովին հիւանդ լինելուց չէր: Թէյի ժամա-  
նակ մենք բաւականին խօսացինք, և ծերուկը  
պատմեց ինձ իր վիշտը:

— Յիշում ես, պարոն, այն կարապին.

— Որդեգրիդ.

— Այո, հենց նրան... Ա՛խ, լաւ թռչուն  
էր... Ա՛յո, չը կայ էլ Որդեգիրս... Գարձեալ  
մենակ մնացինք Սամուրիկի հետ:

— Որսորդները հօ չըսպանեցին.

— Ո՛չ, պարոն, ինքը գնաց... Հենց այդ  
է, որ սիրտս կոտրեց... Որքան ցաւեցի... Եւ  
ինչպէս էի նրան նայում պահպանում... Ձեռ-  
քիցս էի կերակրում... Ձայնիս էլ սովորել էր:  
Երբ լող էր տալիս լճի երեսին ու կանչում էի,  
իսկոյն մօտ էր գալիս: Ծատ խելացի թռչուն  
էր և ինչպէս էր ինձ ընտելացել... Բայց ձմեռ-  
ւայ սկզբին անբախտութիւն պատահեց. կա-  
րապների մի երամ ցած իջաւ մեր Պարզ լճի  
վրա: Լողում, կերակրում, հանգստանում էին.  
ես էլ մտիկ էի տալիս և հիանում: Թո՛ղ,  
ասում եմ, Աստուծաբարածներն ուժները հաւա-  
քեն. մօտիկ տեղ հօ չեն թռչելու... Որդեգիրս  
սկզբում իրեն հեռու էր պահում միւս կարապ-  
ներից. մօտենում էր նրանց և նորից ետ  
գառնում: Նրանք ղղղում, կանչում էին նրան  
իրենց լեզուով, իսկ Որդեգիրս շտապում էր  
տուն... Կարծես ասել էր ուղում, թէ. «ես իմ  
տունն ունեմ»... Այդպէս երեք օր տևեց...

Ծարունակ իրանց լեզուով՝ թռչունի լեզուով ի-  
րար հետ խօսում էին: Յետոյ, տեսնեմ Որդե-  
գիրս տխրեց, իսկ այնպէս, ինչպէս մարդն է  
տխրում: Դուրս կը գար ափը, մի ոտը բար-  
ձրացրած կը կանգնէր ու կը կանչէր... Այն  
էլ ի՛նչ ողբալի ձայնով... Սիրտս ճմլւում էր,  
իսկ անպիտան Սամուրիկը գայլի նման սկսում  
էր ոռնալ: Ի՛նչ ասել կուզի՝ ազատթռչուն էր...

Ծերուկը լռեց և ծանր հառաչեց:

— Յետոյ, պապի.

— Ա՛խ, էլ մի հարցնի... Ամբողջ օրով  
փակեցի նրան խրճիթում, բայց ոչինչ դուրս  
չեկաւ: Կանգնում էր դռան մօտ մի ոտքի վրա  
և այդպէս անշարժ մնում, մինչև որ տեղից  
բշում էի: Կարծես՝ էնէ մարդու լեզուով  
պիտի խօսէր. «Թո՛ղ ինձ, պապի, գնամ ընկեր-  
ներիս մօտ: Նրանք դէպի տաք երկիրները կը  
թռչեն, իսկ ես ձմեռն ի՛նչ անեմ այստեղ, ձեզ  
հետ»: Ա՛խ, Աստուծ, մտածում էի, ի՛նչ ա-  
նեմ. ծանր խնդիր էր: Թողնեմ, կը թռչի երամի  
ետևից և կը կորչի...

— Ինչո՞ւ կը կորչի:

— Ի հարկէ կը կորչի: Նրանք ազատ են  
մեծացած. երիտասարդներին ծնողներն են թլու-  
չել սովորեցնում, բա ի՛նչ ես կարծում, ի՛նչպէս  
են անում: Հենց որ փոքրիկ կարապները մի  
քիչ մեծանում են, ծնողները դուրս են բերում  
նրանց ջրի վրա և սովորեցնում թռչել հեազ-  
հետէ աւելի ու աւելի հեռու: Աչքովս եմ տե-

1608  
35280

սել: Սկզբում ամեն մէկին առանձին-առանձին են սովորեցնում, յետոյ փոքրիկ խմբերով, իսկ յետոյ արդէն մի մեծ երամ են կազմում: Իսկ իմ Որդեգիրը մենակ է մնացել և համարեա ոչ մի տեղ չի թուել: Լող էր տալիս լճի վրա—այդ էր նրա ամբողջ շնորքը: Ի՞նչ նրա բանն է թռուչելը. ուժասպառ կը լինի, ետ կը մնայ երամից, կը կորչի, այդպէս հեռու թռչելուն նա սովոր չէ:

Ծերուկը նորից լռեց և փոքր յետոյ շարունակեց.

— Բայց վերջն ստիպւած եղայ արձակել. — արտասանեց նա տխրութեամբ:— Միևնոյն է, ասացի, եթէ պահեմ էլ, կը տխրի, հալից կընկնի: Այդ տեսակ թռչունն է: Եւ արձակեցի: Որդեգիրս միացաւ երամին, մի ամբողջ օր նրանց հետ լողաց, և նորից տուն վերադարձաւ: Երկու օր այդպէս գնում վերադառնում էր: Թռչունն էր, բայց ծանր էր նրա համար անից բաժանելը: Նա վերջին հրաժեշտը տալու էր գալիս, պարոն... Վերջին անգամ նա մի յիսուն քայլ հեռացաւ փից, յետոյ կանգնեց և կանչեց իր լեզուով. Այսինքն թէ՛ «Շնորհակալ եմ, պապի, ադ ու հացիդ համար»: Ու էլ չերևաց: Դարձեալ մենակ մնացինք Սամուրիկիս հետ: Առաջի օրերը շատ էինք տխրում: Հարցնում էի՝ Սամուրիկ, ո՞ւր է մեր Որդեգիրը: Նա իսկոյն սկսում էր ոռնալ և վազում էր լճի ափը, սիրելի ընկերոջը որոնելու... Իսկ ես

գիշերները շարունակ երազում տեսնում էի՝ իբր թէ նա լողանում է լճի մէջ և թափ է տալիս թևերը ու ջրին զարնում: Արթնանում, դուրս էի նայում,— ոչ ոք չը կար... Ահա թէ ինչ դուրս եկաւ, պարոն:



Կարծում էի, որ ինչպէս  
 էր փոքրիկ  
 Սամուրիկ  
 վաղ թուր 2

19-  
The following is a list of the names of the persons who have been appointed to the various committees of the Board of Directors of the Bank of the Commonwealth of Massachusetts, for the year 1881.



« Ազգային գրադարան »  
  
NL0318831

11990

ԳԻՆՆ Է 6 ԿՈՊ.

Չի՛լի «Հանկերի» խմբագրութիւնն. Թիֆլիս, Թիֆլիս,  
րեդակցիա «Ասկեր».